

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՆԿՑՈՒՐԱՑՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

2. Ղ. ՄԻՋՈՍԱՆ

Ինչպես գիտենք, 15—16-րդ դդ. Եվրոպայի պատմության մեջ հայտնի են որպես աշխարհագրական ու բնագիտական մեծ հայտնագործությունների դարաշրջան: Ընդհակառակը, այդ նույն ժամանակաշրջանում պատմական դժնդակ պայմանների հետևանքով Հայաստանում տիրում էր գիտամշակութային խոր անկում: Փաստորեն շուրջ երկու դար հայ գիտական միտքն անտեղյակ էր մնացել եվրոպական գիտության նվաճումներին: Եվ ահա 17-րդ դարի սկզբներին, երբ Հայաստանում համեմատաբար նպաստավոր պայմաններ են ստեղծվում գիտության ու մշակույթի զարգացման համար, օրակարգի հարց է դառնում նախորդ դարերի բացի լրացումը: Այդ տեսակետից վիթխարի դեր է խաղացել Հովհաննես Անկյուրացին, որը փայլուն տիրապետելով լատիներենին, երիտասարդական տարիներից սկսում է հայերեն թարգմանել տիեզերագիտական, աշխարհագրական ու բնագիտական բնույթի մի շարք գործեր՝ հարստացնելու համար հայ ընթերցողի մտահորիզոնը: Եվ որ ամենակարևորն է, նա դա արել է գիտակցված ու նպատակադրված: 1628 թ. թողած մի հիշատակարանում ասում է, որ Ամերիկա աշխարհամասի վերաբերյալ «նոր պատմութիւնք մաւտ մեզ ոչ գտնվի կատարելապէս, վասն որոյ զսոքայ կամեցանք գրելու, որ ոչինչ են. որ մեր մէջն չլինալով լինի այս սակաւքն, որ շատ է քիչ է հայքն այլ իմանան զուստութիւն և առնեն զճաշակն այդպիսի աշխարհաց կենալոյն: Եւ թէ աստուած կամենայ որ երթամ ֆռանկաց տունն և հանդիպիմ այդպիսի գրեանք որ լիակատար պատմութենով լինայ և նոր սահմանեալ նա թարգմանեմ և լատրենն որ քո բանն կիսակատար չի մնայ, այլ լման և ամէնեկն կատարեալ»¹: Իհարկե, Անկյուրացին հետագայում գնացել է «ֆռանկաց տունն», բայց թե ինչ նոր գործեր է թարգմանել, առայժմ ոչինչ չենք կարող ասել: Մի բան ստույգ է, սակայն, որ նա հայերեն աստվածաշունչ տպագրելու մի շարք անհաջող փորձերից հետո կարողանում է Վենետիկում տպագրել երկու գիրք՝ Սաղմոսարան (1642) և Ներսես Շնորհալու Հիսուս որդին (1643): Հաշվի առնելով Անկյուրացու գործունեության հենց այդ կողմերը, մինչև վերջին ժամանակներս հայագիտական գրականության մեջ մշակութային այդ մեծ գործիչը դիտվել է սոսկ որպես թարգմանիչ ու տպագրիչ²: Մինչդեռ նրա թողած գրական ժառանգության ուսումնասիրությունից պարզվում է, որ լատիներենից իր թարգմանած աշխատությունների հանդեպ նա, իբրև կանոն, դրսևորել է քննադատական-ստեղծագործական մոտեցում՝ կատարելով էական կրճատումներ ու հավե-

¹ Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 1780, էջ 284ա:

² Տե՛ս օրինակ՝ Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն (հնագույն ժամանակներից մինչև 19-րդ դարի սկիզբը), Եր., 1964, էջ 298—304, Լ. Խաչիկյան, Հայ բնագիտական միտքը 14—18-րդ դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2, էջ 35; Բ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, հ. 1, Եր., 1977, էջ 379—385:

լումներ, իսկ երբեմն էլ՝ լատինական տարբեր աղբյուրների համադրմամբ ստեղծել է հայերեն նոր աշխատություն: Բերենք մեր միտքը հաստատող մի բանի փաստ:

Հովհաննես Անկյուրացու թարգմանչական գործունեությունը, հետևաբար և նրա կատարած գիտական ու ստեղծագործական աշխատանքը հասկանալու և գնահատելու համար բացառիկ կարևորություն ունի Մ. Մաշտոցի անվան մատենադարանի № 1780 ծավալուն ձեռագիրը, որը կազմված է տարբեր գրիչների կողմից գրված ձեռագրական երկու ինքնուրույն միավորից: Դրանք հետագայում մեխանիկորեն միացվել են իրար՝ հավանաբար այն բանի հիման վրա, որ պարունակում են թարգմանական գրեթե նույնարևույթ գործեր, որոնց բոլորի թարգմանիչը, չհաշված առաջին մասի սկզբի որոշ էջեր³, նույն Հովհաննես Անկյուրացին է: Դրանում համոզվելու համար բավական է ասել, որ ձեռագրի առաջին և երկրորդ մասերն իրարից տարբերվում են ոչ միայն գրչական արվեստով ու պահպանվածության որակով, այլև մամլահամարներով: Առաջին մասը մամլակալված է մինչև 251թ էջը (մամուլ՝ ա-իա), որից հետո շկան մամլահամարներ, իսկ 302ա էջից սկսվում են նոր մամլահամարներ՝ ա-ը: Ընդ որում առաջին մասի պարունակած գործերից ոմանք թարգմանվել են Ապիանի «Կոսմոգրաֆիայի» թարգմանությունից (1621 թ.) առաջ, իսկ մյուսները՝ նրանից հետո: Օրինակ «Վասն հասարակաբար քարերուն, թէ պատուական և թէ անպատուական» (էջ 289բ—300բ) վերնագրով ոչ մեծ աշխատության հիշատակարանում ասվում է, որ «եղև վերջ վասն ականց թարգմանեալ ի ֆռանկ Անկուրացի Յոհաննիսէն ի Անկուրիայ ցաղաքն թվին հայոց ՌԿէ» (էջ 300բ), այսինքն՝ 1618 թվականին: Մինչդեռ «Պատմութիւն աշխարհաց» անանուն աշխատության հիշատակարանում գրում է, որ Ամերիկայի հայտնագործումից (1492 թ.), որը նրան ստուգատես հայտնի է, «մինչև ի մերում անձեալ կայ տարիք ճԼԶ», այսինքն՝ 136 տարի: Դատելով այս աշխատության առանձին տեղերից, մենք հավելված ենք մտածելու, որ դա ոչ թե թարգմանություն է բառի բուն իմաստով, այլ տարբեր աղբյուրներից քաղված նյութերի վերաշարադրանք կամ ծայրահեղ դեպքում՝ ազատ փոխադրություն: Մեզ այս եզրակացությունն են հանգեցնում նշված հիշատակարանում քանիցս կրկնվող «կայր գրելու այլ պատմութիւն: «ոչ կամեցան(ք) գրելու», «այս շափս համարեցանք բուռական լինալն», «այլ նոր աշխարհիս պատմութիւնքն գրեալ եմ որպէս որ առաջի ժամանակն գրտան» նույնանման դարձվածքները: Եթե ճիշտ է մեր այս ենթադրությունը, ապա կարող ենք ասել, որ մենք գործ ունենք 17-րդ դ. հայ աշխարհագրական մտքի ցարդ անծանոթ արտահայտության հետ, որը կարող է մասնագիտակցական բարեխիղճ ուսումնասիրության: Այդ տեսակետից անշափ հետաքրքիր է նաև լատիներենից Հովհաննես Անկյուրացու թարգմանած մեկ ուրիշ աշխարհացույց⁴, որը թարգմանություն լինելով հանդերձ՝ Հայաստանի մասին

³ Իրեն այդ էջերի թարգմանիչ նշվում է Հովհաննես Ստանոզցին, որը հավանաբար նույն Անկյուրացին է: Այլապես հազիվ թե նույն տարիներին (1617 և 1618 թվականներին) գտնվեին երկու տարբեր Հովհաննեսներ, որոնք «ի ֆռանկ բառն ի մլրն» (էջ 15բ) կամ «ի ֆռանկ բառն ի հայուն» (էջ 80ա) թարգմանեին նույնանման գործեր և այդ բոլոր տեղ գտնեին միևնույն ձեռագրում: Համենայնդեպս նշված ձեռագրի 80ա էջում հիշատակված «մեղաւօր ֆրոնակ» Հովհաննես Անկյուրացին է, որը մեկ ուրիշ տեղ իր մասին գրում է. «Անուանք և գործք սիրիներուն ի ֆռանկ բառն ի մերն թարգմանեալ ի անպիտան ծառայէս Անկուրացի Յոհաննիսէն որ ալ անունով կոչի ֆռանկ» (էջ 86ա): Իմիջիպայց Անկյուրացին հետագայում Իտալիայում ստացել է նաև «Զուան Մոլինո» կամ ինչպես ինքն է ասում՝ «քստ հոռմայիցոց ճիւղանի մօլինո» մականունը: Ինչևէ, մենք համոզված ենք, որ հետագա մանրագրի ուսումնասիրությունները կարող են պարզել այս հարցերը:

⁴ Տե՛ս «Աշխարհացույց թարգմանեալ ի լատինացոց ումեմն Յոհաննիսի Անկյուրացու:

պարունակում է ցավով ու ափսոսանքով գրված այնպիսի փաստեր ու տեղեկություններ, երբեմն բավական ընդարձակ, որոնք հազիվ թե կարողանային տեղ գտնել նույնիսկ այդ ժամանակ Արևելքին ամենաքաջագիտակ եվրոպացի գիտնականի հեղինակած գրքում: Բերենք միայն մեկ փաստ: Կիլիկիային նվիրված բաժնում, ի թիվս այլ մտքերի, կարդում ենք. «Դարձեալ յես բազում ժամանակաց ազգն հայոց վտանգեալ ի տաճկաց, քանի մի մարդիկ եկին՝ յայս երկիրս Կիլիկեցոց և առին բազում տեղիս և տիրեցին քաղաքաց և այնչափ զօրացան, որ ի հոռմայեցոց կայսերէն և ի փափէն թագաւոր հայոց օժաւ, ուր նստան բազում բարեպաշտ արքայք, որք լուսաւորեցին զհայոց ազգս. ևս առաւել առատացուցին զաստուածային գրեանս. յորոց միջի էին թագաւորք անուանեալ Հեթում, Լեոն և այլք, որք արարին բազում յիշատակի արժանի գործք և բարութիւնք որպէս ի պատմագիրս մեր (այս և հետագա ընդգծումները մերն են,— Հ. Մ.) և ի ֆուսկաց գրեալ կայ. ևս առաւել Լեոն թագաւորն, որ ի՞նչ ամ թագաւորեաց, զտիւ և զգիշեր պաշտոն և պատարագ ոչ պակասեցոյց: Ապա վասն մեղաց մերոց մահմեդականքն, որ ի մո(տ) կային, հեղան վերանիս և առին զթագաւորութիւն և տարան ի գերութիւն բազումս ի մէնջ և խափանեցին զիշխանութիւնն հայոց»⁵: Ինչպես տեսնում ենք, Հովհաննես Անկյուրացին տվյալ դեպքում ոչ թե թարգմանել է լատիներեն ինչ-որ աշխարհացուց, այլ նման մի աղբյուրի հիման վրա գրել է հայերեն մի նոր աշխատություն:

Հովհաննես Անկյուրացու թարգմանչական գործունեությունը գնահատելու առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի Պետրոս Ապիանի «Կոսմոգրաֆիայի» թարգմանությունը⁶: Գերմանացի տաղանդավոր գիտնականի այս աշխատությունը բացառիկ դեր է խաղացել եվրոպայում աշխարհագրության, քարտեզագրության ու աստղաբաշխության զարգացման գործում: Առաջին անգամ տպագրվելով 1524 թվականին՝ այն հետագայում ունեցել է բազմաթիվ հրատարակություններ, ինչպես նաև թարգմանվել ու տրւպագրվել այլ լեզուներով: Օրինակ, 1584 թ. այն լույս է տեսել ֆրանսերեն: Ճիշտ է, Ապիանից հետո եվրոպայում գիտությունը հսկայական քայլերով առաջ էր գնացել և 17-րդ դ. սկզբներին նրա գաղափարներից ու մեթոդներից շատերն արդեն հնացել էին, բայց և այնպես նրա գիրքը դեռ շէր կորցրել իր այժմեականությունը, առավել ևս՝ հայ ընթերցողի համար: Եվ ահա ժամանակի առաջավոր գիտնական Կարապետ Երզնկացու նյութական ու բարոյական օժանդակությամբ երիտասարդ Հովհաննես Անկյուրացին ձեռնարկելով Ապիանի գրքի թարգմանությունը, երևան է բերում ոչ միայն լատիներենի ու հայերենի իմացություն, այլև իր ժամանակի համար աշխարհագրական ու աստղաբաշխական հարուստ գիտելիքներ: Ըստ այդմ էլ՝ նա հայ ընթերցողին է փոխանցում ոչ թե Ապիանի աշխատության տառը, այլ նրա գիտական ոգին՝ այն հարստացնելով մի շարք նոր գաղափարներով ու հարցադրումներով: Հնարավորություն չունենալով մանրամասն ներկայացնել թարգմանության ժամանակ Անկյուրացու կատարած գիտական բոլոր հավելումները, լրացումները, ճշգրտումներն ու փոփոխությունները, դրանց մասին մոտավոր պատկերացում կազմելու համար բերենք միայն մի քանի փաստ: Հաճախ հայ թարգմանիչը տեսնելով, որ գերմանացի գիտնականի այս կամ այն միտքն արդեն հնացած է, ոչ միայն հարկ է համարում նշել, որ այսօր

Յաղագս բոլոր հոդվածն յիսկերպաց», Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. № 462, էջ 119ա—132բ, ձեռ. № 1721, էջ 29բ—57ա, նաև՝ ձեռ. № № 3070, 5026, 6567:

⁵ Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 462, էջ 128ա-բ:

⁶ Այս երկի հայերեն թարգմանության մասին տե՛ս Բ. Քումանյան, նշված աշխ., էջ 298—304, Լ. Խաչիկյան, նշված աշխ., էջ 35:

գիտութեան մեջ իշխում է այլ տեսակետ, այլ բերում է այդ նոր տեսակետը: Օրինակ, թարգմանելով հողմերի մասին Ապիանի գրքի համապատասխան հատվածը, Անկյուրացին միաժամանակ ավելացնում է. «Զայս ամեն որ ի վերն պատմեաց իմաստասերն Պետրոս ստուգապէս է հին ճարտարից ուսմունքն է աղաքս հողմոց բաժանմունքն որպէս Արիստոտէլի, Մակրոբիոսի և այլ ճարտար իմաստասիրաց ուսմունքն այտնի առնէ. բայց այժմու ժամանակի նոր ջրագրողքն աղաքս հանգիստ նաւորդելու բազում ցեղ ճանապարհնին դրին և ուրիշ կերպիւ բաժանեցին թէ ծովն թէ ցամաքն. վասն այսորիկ բաժին արարին հողմունքն ի ԼԲ բաժին, որոց Դ գլխաւորքն հետեւի ընդ հին իմաստնոց ասացմունքն»⁷: Մեկ ուրիշ անգամ շարադրելով Հնդկաստանի աշխարհագրական երկայնութեան ու լայնութեան մասին Ապիանի մրտքերը՝ «Անկուրիացի թարգմանչին մեյնութիւն աղաքս հետկաց տանն» վերնագրի տակ հայ թարգմանիչը գրում է. «Ո՞վ ընդերցող լինի ձեզ ծանուցում որ այս հարաւային հետկաց տան պատմութիւն և գրութիւն ոչ հետեւի նոր ասողաց քանզի առաջինքն ևս առավել Մարկոս Վանատիկցին որոյ հետեւի իմաստասերն Պետրոս գրքին սահմանողն ասացին հարաւային Հնասդանն ունենալ առաւել երկայնութիւն քանզ ՄՁԵ և լայնութիւն քանզ ԺԶ աստիճանք հարաւային, բայց այժմի երկրագրողաց ասացմունքն ոչ է արեւելքեան և հարաւային հետկաց տունն քանզ ԺԶ և լայնութիւն հարաւային ոչինչ, որպէս այտնի ցուցանէ մեծ թաւուլան բոլոր աշխարհին որ ևս սահմանեալ եմք, բայց սոցա ասացքն լինի մինչև ի հարաւային անձանող եղեալ երկիրն և ոչ հետկաց տանն, ապա որպէս մենք գտանք ի գիրքն նոյնպէս թարգմանեցանք աղաքս սորա մեղադրելի ոչ լինաք»⁸: Պարզեպարզ երևում է, որ Հովհաննես Անկյուրացին իբրև գիտնական ու աշխարհագրագետ պատրաստել է նաև զանազան քարտեզներ: Այդ է հաստատում նաև իր ուսուցիչ և Ապիանի գրքի թարգմանութեան մեկենաս Կարապետ Երզնկացուն ուղղված Անկյուրացու հետևյալ միտքը. «Եթե կամիս շափական արհեստի իմանալ երկրի երկայնութեամբ տեղաց հեռաւորութիւնք այսպէս արայ: Առ գունդն երկրաշափական որ բոլոր տեղերն վերա գրած լինայ կամ դուր տախդակ մի որ աշխարհագիր լինայ որպէս այն է. որ վասն վեհ իմաստութեանդ սահմանեցի ով բարունապետ և անախդ ֆիլիսոֆայ տէր Կարապետ վարդապետ»⁹:

Ավելին, հիմքեր կան ասելու, որ, ամենայն հավանականութեամբ, Հովհաննես Անկյուրացին Ղուկաս Վանանդեցուց 55 տարի առաջ տպագրել է աշխարհի քարտեզ: Իսկ որոնք են այդ հիմքերը: Դեռևս 1896 թ. «Մշակ» թերթը գերմանական «Hamburger Fremdeblatt» լրագրից կատարել է հետևյալ մեջբերումը. «էրզրումի Սանասարյան դպրոցում պահպանվում է մի նշանավոր աշխարհագրական քարտեզ, 1640 թվի հրատարակութուն: Քարտեզը տպագրված է Ամստերդամում և ներկայացնում է երկու կիսագնդերը հայերեն արձանագրութեամբ: Հայկական այդ քարտեզը նշանավոր է մանավանդ նրանով, որ նրա վրա շատ ճիշտ գծագրված է Նեղոս գետի հոսանքը և ներքին Աֆրիկայի բոլոր լճերի դասավորութունը: Քննելով քարտեզը իր բոլոր մանրամասնություններով, կարելի է գալ այն եզրակացության, որ 250 տարի առաջ հայերը գեղեցիկ կերպով տեղյակ էին Նեղոսի աղբյուրների դրութեան, ոչ պակաս քան մեր ժամանակի ներքին Աֆրիկայի հետազոտողները»¹⁰: Ավարտելով մեջբերումը, թերթն իր կողմից ավելացնում է, որ «այդ

⁷ Մ. Մաշտոցի անվ. մատենագրան, ձեռ. № 1780, էջ 334—335ա:

⁸ Նույն տեղում, էջ 331ա:

⁹ Նույն տեղում, էջ 317ա:

¹⁰ «Մշակ», 1898, № 39, էջ 3:

քարտեզի մի ուրիշ օրինակը գտնվում է Շուշու թեմական դպրոցում: Ինչպես մեզ հաղորդում են, այդ քարտեզը բավական անխնամ կերպով է պահպանվում և ցանկալի է, որ դպրոցի հոգաբարձությունը հոգ տաներ, որ մի այդպիսի հազվագյուտ և թանկագին առարկա չը փշանա»¹¹: Արձագանքելով «Մշակին», «Հանդես ամսօրյան» «Ազգային թերթերի ծաղկեփունջ» վերնագրի տակ նույնությամբ բերել է «Մշակի» հաղորդումը և իր հերթին ավելացրել. «Լավագույն կը համարեինք դպրոցի սրահներին փոխադրել այսպիսի հնություններ և մասնավոր ապակիներու տակ կամ թանգարաններու մեջ պահել: Շատ հավանական է, որ վերոհիշյալ աշխարհացույցը՝ Վանանդեցվոց 1695-ին Ամստերդամ հրատարակած համատարած աշխարհացույցն ըլլա»¹²: Անշուշտ, բացառված չէ, որ խնդրո առարկա քարտեզը եղել է հենց Ղուկաս Վանանդեցու հրատարակած «Համատարած աշխարհացույցը»: Բայց նույն ձևով չի բացառվում, որ խոսքը վերաբերում է, իրոք, 1640 թվականին տպագրված մեկ ուրիշ նույնանման քարտեզի: Իսկ եթե ճիշտ է, որ այն իսկպես լույս է տեսել 1640 թ., ապա պետք է ասել, որ նրա ամենահավանական հեղինակը կարող էր լինել հենց Հովհաննես Անկյուրացին, որովհետև նախ՝ ինչպես տեսանք, նա դրանից ավելի քան 20 տարի առաջ գծագրել էր Աշխարհի և Ասիայի քարտեզներ, երկրորդ, անձամբ զբաղվելով տպագրության հարցերով, 40-ական թվականների սկզբներին հրատարակել էր հայերեն երկու գիրք: Վերջապես, վերը մենք ասացինք, որ Մաշտոցի անվան մատենադարանի № 1780 ձեռագրի 127բ—284ա էջերն զբաղեցնող Աշխարհացույցը պատկանում է Անկյուրացու գրչին: Այստեղ անդրադառնալով Աֆրիկա աշխարհամասի նկարագրության հարցին, գրում է, որ հին աշխարհագրագետներն այն բաժանում էին 5 մասի, իսկ «այժմի սայ որպէս Յովհաննես Լեվոնն պատմէ ի Գ բաժին բաժանի»¹³: Այնուհետև խոսելով վերջին շրջանում Աֆրիկայի ուսումնասիրության ուղղությամբ կատարված քայլերի մասին, ավելացնում է. «Հարաւային կողմն ի հնոց ոչ էր ծանոթ մինչև ի Վրիստոսի թվին Ռ.ՆՂէ, որ գտաւ առաջ Վաշգօ տէ Կամայ սայ անցանելով այն սրածարն որ կոչին Բարի յուսուն զբոլոր Աբրիզան շրջապատելով հասավ ի Գալէզուդ երկիրն և այս բաժինն պարսիկքն, արաբքն կոչին իրեանց բառովն ծանծիբար»¹⁴: Իբրև իր ժամանակի աշխարհագրական գիտության նվաճումներին քաջագիտակ անձնավորություն, Անկյուրացին Աֆրիկայի մասին հին աշխարհագրագետների տված տեղեկությունները համարելով թերի ու կիսակատար, ընթերցողին խորհուրդ է տալիս, որ եթե «կամիս նոր հմաստունք կարդալ նա տէս Ալովիսիոսն Գատամոստոն և Վասգոն Տէկաման այլ կարդայ Ֆրագիսգոս Ալվարէսն, որ լաւ գրեաց Յթովպացոց երկիրն: Ապա քան զամենն այլ լաւ որ վասն այս Աբրիգու գրեաց, նա է Յովհաննէս Լեոնն և այլ կա Յովհաննէս Պարրիոսն, որ վասն Աբրիգու պաշխայ կտոր գիրք մի գրեաց վասն Նիլ գետոյն. և վասն բոլոր աշխարհիս լաւ թղթեր գրեցին Յովհաննէս Մկրտիչ Բամուսիոն և Հերոնիմոս Ֆրագոս Դրիոսն Սուսիդ արեղայք որպէս շուրջ եկան և որպէս տեսան լաւ գրեցին»¹⁵: Դժվար չէ տեսնել, որ Անկյուրացին հատուկ շեշտելով Նեղոս գետն ուսումնասիրողի անունը, քարտեզ պատրաստելիս պետք է դրսևորեր Նեղոսին լավածանոթություն: Ելնելով այս ամենից, կարծում ենք, իրավունք ունենք ասելու, որ վերը մեր արած ենթադրությունը զուրկ չէ գիտական հիմքից:

¹¹ Նույն տեղում:

¹² «Հանդես ամսօրյա», 1896, թիվ 6, էջ 187:

¹³ Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. № 1780, էջ 186ա:

¹⁴ Նույն տեղում, էջ 136բ—137ա:

¹⁵ Նույն տեղում, էջ 138ա:

Հարկ է նշել, որ Անկյուրացին Ապիանի գրքում կատարել է այլ կարգի հավելումներ ևս. բանն այն է, որ Ապիանի «Կոսմոգրաֆիայի» երկրորդ մասում (գլուխ 5-րդ) տրվում է աշխարհի բազմաթիվ քաղաքների աշխարհագրական կոորդինատների բավական ընդարձակ տախտակ: Անկյուրացին այն համալրել է իր իսկ թարգմանած Պտղոմեոսի Աշխարհացույցի¹⁶, ինչպես նաև այլ աղբյուրներից քաղած մի շարք քաղաքների անուններով՝ դրանց դիմաց նշանակելով կարմիր աստղանիշներ: Ընդ որում, թե՛ Ապիանի տախտակում նշված և թե՛ իր կողմից ներմուծված քաղաքներից շատերի մասին հայտնում է զանազան կարգի տեղեկություններ: Օրինակ, Կրակով քաղաքի աշխարհագրական կոորդինատները տալուց առաջ գրում է. «Գրագաւիայ Պտղոմիոսն ասէ Գարրոսունում լեհաց թագաւորին աթոռանիսդն է և այժմի նսդի բարեպաշտ արքայն Դ-րդ»¹⁷ Միկիզմունտոսն որ տէր աստուած բարով վաելել տացէ և զիր բանն բարին առաջնորդեսցէ, զի ունի ի դիկունս ահագին վիշապ և պատառող քաղան բազում զաւրոս...»¹⁸: Հարց է ծագում. այդ ո՞ւմ են վերաբերում մեր ընդգծած հատվածում Հովհաննես Անկյուրացու տված գնահատականները: Այդ հարցի պատասխանը պարզ ու որոշակի երևում է Կ. Պոլսի մասին Անկյուրացու կատարած հավելումից, որտեղ, ի թիվս այլ տեղեկությունների, կարդում ենք. Այժմի նսդի սուլթան Ասմանն որ ժերորդ թագաւոր այլազգեաց և կայ այժմի բազում զաւրոս և հեծելոք ի վերայ լէհաց քրիսդոնէից»¹⁹: Անկյուրացու հայտնած այս տեղեկության արժեքն ու ստուգությունը որոշելու համար բավական է ասել, որ, իսկապես, Կ. Պոլսի գրավումից մինչև Օսման 2-րդը (1618—1622 թթ.) ներառյալ, թուրքական գահի վրա իրար հաջորդել են ճիշտ և ճիշտ տասը տիրակալ, իսկ երբ Անկյուրացին թարգմանում էր սույն աշխատությունը (սկսել է թարգմանել 1621 թ. հուլիսի 20-ի երկուշաբթի օրը)²⁰, կատաղի կոիվներ էին տեղի ունենում թուրքական ու լեհական բանակների միջև: Նույն թվականի սեպտեմբերին լեհերին հաջողվեց խոտինի մոտ կասեցնել թուրքերի առաջխաղացումը, հոկտեմբերի 19-ին կնքվեց զինադադար, որին հաջորդեց 1623 թ. հաշտության պայմանագիրը: Ելնելով այստեղ բերված և մի շարք այլ փաստերից, կարող ենք ասել, որ Պետրոս Ապիանի «Կոսմոգրաֆիա» գրքի հայերեն թարգմանությունը բազմաթիվ արժանիքների հետ մեկտեղ ստանում է նաև պատմագիտական կարևոր նշանակություն:

Այս ամենից հետո օրինական հարց է ծագում. իսկ ո՞ր հայերենով էր գրում ու թարգմանում Հովհաննես Անկյուրացին: Նախքան այս հարցին պատասխանելը հարկ ենք համարում հիշեցնել, որ սկադեմիկոս Գ. Զահուկյանը հայոց գրային լեզվի պատմությունը բաժանելով երեք շրջանների՝ հին, միջին և նոր, վերջինս էլ, որ սկսվում է 17-րդ դ. սկզբից և տևում մինչև մեր օրերը, բաժանում է հետևյալ ենթաշրջանների՝ վաղ աշխարհաբարի (17-րդ դ. — 19-րդ դ. կեսերը), երկճյուղ աշխարհաբարի (19-րդ դ. կեսերից մին-

¹⁶ Ի դեպ՝ Գ. Պետրոսյանը և Ա. Արրահամյանը Պտղոմեոսի Աշխարհացույցի հայերեն թարգմանությունը վերագրում են Ազարիա Զուղայեցուն՝ հղելով Մաշտոցի անվ. մատենադարանի № 3956 ձեռագիրը (տե՛ս «Երկրաչափութիւն Եզրիպի», Եր., 1962, էջ 156): Նախ՝ ըստ «Յուզակ ձեռագրաց»-ի Պտղոմեոսի Աշխարհացույցը պահպանվել է ընդամենը չորս ձեռագրում (№ № 1459, 1780, 1788 և 3965) և երկրորդ՝ դրանցից հնագույնում (№ 1780), որը լատիներենից թարգմանված համաբնույթ աշխատությունների ժողովածու է, որոնց բուրբի թարգմանիչն, ինչպես ասել ենք, Հովհաննես Անկյուրացին է, կարդում ենք. «Վերջ թուրմիայի աշխարհացույցին ի մեղոս ծառայ աստուծոյ Յոհաննէսէն թարգմանեալ» (էջ 127բ):

¹⁷ Այստեղ թույլ է տրված փոքրիկ սխալ՝ պետք է լինի Գ-րդ:

¹⁸ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 1780, էջ 360բ—361ա:

¹⁹ Նույն տեղում, էջ 364բ:

²⁰ Նույն տեղում, էջ 302ա:

չև 1920 թ.) և ժամանակակից հայերենի (1920 թ. մինչև մեր օրերը): Վաղ աշխարհաբարը կամ Հովհաննես Հոլովի տերմինով ասած «քաղաքացիական հայերենը», Գ. Զահուկյանի բնութագրմամբ, «ունենալով բարբառային հիմք՝ ենթարկված էր և գրաբարի նշանակալից ազդեցությանը, հանդես էր գալիս բոլոր քաղաքացիական գործառնությունների դեպքում՝ որպես նամակագրության, գործնական-գործարարական գրագրության, ճշգրիտ գիտական ու գործնական գիտելիքներ հաղորդելու, դատական և այլ կարգի հասարակական ատենախոսությունների, տարբեր բարբառների ներկայացուցիչների հաղորդակցման (առևտուր, ճաշկերույթ, դպրոցական-կրթական գործ, հանդիսավոր տոնախմբություններ և այլն), ավելի ուշ նաև որպես թերթերի ու հանդեսների լեզու, մի խոսքով՝ այն բոլոր դեպքերում, երբ անհրաժեշտ էր ընդհանուր հասկանալի մի լեզվի առկայությունը»²¹: Փաստորեն Հովհաննես Անկյուրացին որպես 17-րդ դ. առաջին կեսին ապրած և հայ ընթերցողին «ճշգրիտ գիտական ու գործնական գիտելիքներ» հաղորդած գործիչ, պետք է ըստեղծագործներ հենց վաղ աշխարհաբարով կամ «քաղաքացիական հայերենով»: Իսկ վերջինս, ակադեմիկոս Գ. Զահուկյանի կարծիքով, «այս շրջանում սպորում էր տարերային զարգացում՝ ունենալով ավելի կամ պակաս տարբերվող տեսակներ՝ նայած գրաբարից, միջին հայերենից և բարբառներից օգտվելու շահերին»²²: Եվ, իրոք, Հովհաննես Անկյուրացին աշխարհաբարով ստեղծագործում է հենց տարերայնորեն՝ օգտվելով թե՛ գրաբարից, թե՛ բարբառներից, թե՛ միջին հայերենից, իսկ թարգմանությունների ժամանակ ներմուծում է նաև օտար բազմաթիվ բառեր: Այդ տեսակետից խիստ ուշագրավ են Պետրոս Ապիանի «Կոսմոգրաֆիայի» հայերեն թարգմանության մեջ նրա գործածած աստղագիտական տերմինները: Ստորև բերում ենք այդ տերմինների Թումանյանի կազմած ցանկը, որն ընդգրկում է 20 բառ-տերմին:

«Շամբուրն գնդի— գնդի առանցք, աշխարհի առանցք

Սրչապատ— հորիզոն

Մերիտիան— միջօրեական

Խազ— գիծ

Այրեցեալ գոտի— հասարակած

Կենդանակերպից գոտի— կենդանաշրջան, զոդիակ

Եկաւոր— երկվորյակներ (համաստեղ.)

Ժամագիտակ— արևադարձ

Արդիզոս— արկտիկա

Անդարդիզոս— անտարկտիկա

Բարալլեւ— զուգահեռական

Մէնիդ— զենիթ

Ողորդ— ուղիղ, ուղղահայաց

Գրեբուակուլունք— մթնշաղեք

Այլայլություն— տարբերություն

Կարակին— կարկին

Ալտպրան, աչք կամ սիրտ Յուլին— Ալդեբարան

Չորիակ— քառորդ

Գանոն— քանոն

Տախդակ— աղյուսակ»²³:

Դժվար չէ տեսնել, որ ներկա բառացանկի մի շարք բառեր՝ ծենիդ, կա-

²¹ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 51:

²² Նույն տեղում:

²³ Բ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 304:

րակին, զանոն և այլն, շնչին փոփոխություններով օգտագործվում են նաև ներկայումս: Ուստի սխալված շնք լինի, եթե ասենք, որ Հովհաննես Անկյուրացին, որպես աշխարհաբար հայերենի առաջին մշակներից մեկը՝ իր լուսման է ներդրել հայոց լեզվի գիտական տերմինաբանության ստեղծման գործում:

Ուշագրավ է, որ Անկյուրացին որպես աշխարհաբար հայերենի տարեւորային զարգացման գործուն մասնակից, հեռավոր փորձեր է կատարում ինչպես գրաբարի ու աշխարհաբարի տարբերակման, այնպես էլ գրաբարի օրինակով աշխարհաբարի կարգավորման: Օրինակ՝ Ապիանի «Կոսմոգրաֆիայի» թարգմանության մեջ կարդում ենք. «Կոմայնայ Կապատովկիու որ ունի այլ անուն աշխարհաբար Քոխադ»²⁴: Իսկ լատիներենից հայերենի փոխադրած «Աշխարհացույցում» խոսելով Բուրսա քաղաքի մասին, ասում է. «Այլ վասն այս քաղաքի աշխարհաբար պատմեն թէ սա է Եփեսոս, ուր հաստատեալ էր զիւր աթոռն Յոհաննէս աւետարանիչն, բայց ոչ է ստոյգ և այս բազում պատճառաւ»²⁵:

Թվում է, այսքանն էլ բավական է համոզվելու, որ Հովհաննես Անկյուրացու, իբրև «վաղ աշխարհաբարի ենթաշրջանի» մշակութային բեղուն գործչի, թողած գրական ժառանգությունը վաղուց պետք է դառնար հայոց լեզվի պատմությանը զբաղվող մասնագետների ուսումնասիրության առարկա: Մի բան, որ, ցավոք, մինչև այժմ ոչ ոք չի արել, եթե չհաշվենք Բ. Քումանյանի կազմած վերոբերյալ աստղագիտական տերմինների բառացանկը և Բարկեն Կյուլեսերյանի հպանցիկ արված մի արժեքավոր դիտողությունը: Դեռևս մեր դարասկզբին Ղալաթիայի հայոց ազգային մատենադարանի ձեռագրացուցակը կազմելիս Բ. Կյուլեսերյանը նկարագրելով Անկյուրացու թարգմանած աշխատություններից մեկը (№ 97), գրել է. «Ինչպես որ կը խոստովանի թարգմանիչն ալ, շատ խակ հայերենով մը թարգմանած է այս գործը. աններելի սխալներ կը վիտան նույնիսկ ուղղագրության մէջ: Այսու ամենայնիվ իբր ռավկորեն հայերեն մը հետաբերական է»²⁶: Իսկպես Հովհաննես Անկյուրացին ինչպես այս, այնպես էլ իր մյուս թարգմանություններում բազմիցս խոստովանում է, որ ինքը դեռ լավ չի տիրապետում հայերենին: Ընդ որում, դրա պատճառը ոչ միայն այն է, որ այդ աշխատությունները նա թարգմանել է «երիտասարդութեան ժամանակ», այլ որ «հայոց բառից» հմուտ չէ ելման պակասութեան վարպետացն»²⁷: Կարողացել է արդյոք Հովհաննես Անկյուրացին ավելի հասուն տարիքում հմտանալ հայոց լեզվի մեջ և հաղթահարել «պակասութիւն վարպետացն», հուսով ենք, այս հարցերին կպատասխանեն հայոց լեզվի պատմության մասնագետները՝ նրա գրական հարուստ ժառանգության լեզվական մանրազնին քննության հիման վրա: Իսկ այժմ, թվում է, լիովին իրավունք ունենք ասելու, որ Հովհաննես Անկյուրացին իբրև աշխարհաբար հայերենի առաջին մշակներից մեկը, իր արժանի սվանդն է ներդրել նրա լինելության բարդ ու դժվարին գործում:

Օգտվելով պատեհ աղբիթից, կուզենայինք աշխարհաբար հայերենի լինելության մասին արտահայտել մեկ միտք, որն առայժմ լինելով ընդհանուր տպավորության արդյունք, կարիք ունի գիտական հետազա հիմնավորման ու ապացուցման:

Հովհաննես Անկյուրացու թողած գրական ժառանգության, ինչպես և 17-

²⁴ Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. № 1780, էջ 372ա:

²⁵ Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. № 462, էջ 127ա:

²⁶ Բարգեն աթոռակից կաթողիկոս, Յուզակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի հայոց, Անթիլիաս, 1961, էջ 606:

²⁷ Նույն տեղում, էջ 608:

րդ դ. հայ մատենագրութեան ուսումնասիրութիւնը մեզ բերում է այն համոզման, որ աշխարհաբար հայերենի լինելութեան գործում վճռական դեր է խաղացել հատկապէս թարգմանական գրականութիւնը: Ուշագրավ է, որ թեև այդ դարում գրաբար հայերենով նույնպէս ստեղծվում են թարգմանական գործեր, բայց դրանք հիմնականում այն աշխատութիւններն են, որոնք գալիս էին անտիկ և վաղ միջնադարից, օրինակ՝ Արիստոտելի «Մետաֆիզիկան», Էվկլիդեսի «Երկրաչափութիւնը», Կեղծ-Դիոնիսիոս Արեոպագոսու հանրահայտ աշխատութիւններն ու դրանց մեկնութիւնները և այլն: Ընդհակառակը, ուշ միջնադարում և հատկապէս սկսած Վերածննդի դարաշրջանից ստեղծված գերազանցապէս աշխարհիկ բովանդակութիւն ունեցող երկերը (տիեզերագիտական, աշխարհագրական, թվաբանական և այլն), որոնք գալիս էին բավարարելու ամենից առաջ նոր զարգացող հայ առևտրական բուրժուազիայի օրըստօրե մեծացող կենսական պահանջմունքները, հիմնականում թարգմանվում էին աշխարհաբար հայերենով: Ելնելով այդ փաստից, կարծում ենք, իրավունք ունենք ասելու, որ գրաբարից աշխարհաբարին անցումը հիմնականում պայմանավորված է եղել հայ ժողովրդի սոցիալ-տրնտեսական կյանքում տեղի ունեցող դրական տեղաշարժերով և ամենից առաջ՝ նոր զարգացող առևտրաբուրժուական հարաբերութիւններով: Իսկ քանի որ հայ առևտրական բուրժուազիայի վերածումն արդունաբերական բուրժուազիայի տեղի էր ունենում դանդաղորեն և իրականացավ շատ ավելի ուշ, ըստ այդմ էլ՝ վերջնականապէս գրաբարը աշխարհաբարով փոխարինվեց նույնպիսի ուշացումով՝ 19-րդ դ. երկրորդ կեսում:

Г. К. МИРЗОЯН — Литературное наследие Ованеса Анкюраци.— В статье пересматривается бытующая в арменоведении точка зрения о том, что видный деятель армянской культуры первой половины XVII века Ованес Анкюраци был в основном переводчиком и книгопечатником. На основе скрупулезного исследования литературного наследия Ованеса Анкюраци автор показывает, что, во-первых, Анкюраци был также картографом, во-вторых, некоторые из переведенных им с латинского на армянский язык первоисточников одновременно имеют значение самостоятельных сочинений. В статье обосновывается также мысль о том, что Ованес Анкюраци сыграл важную роль в становлении современного армянского литературного языка—ашхарабара.